

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(1993, 2000, 2008 թթ. արտաքին քաղաքականության
հայեցակարգերի համեմատական վերլուծություն)

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Խորհրդային Միության փլուզմամբ ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրավիճակն առաջացրեց նոր ու աննախադեպ միջազգային իրադրություն, ինչն իր հերթին ծնեց տվյալ ժամանակին ու իրականությանը հատուկ մարտահրավերներ ու խնդիրներ: Այս իրավիճակին հարմարվելու և ստեղծված մարտահրավերներին դիմագրավելու համար հրամայական դարձավ որոշակիորեն նոր մոտեցման, քաղաքական գծի, վարքագծի ու ռազմավարության որդեգրումը: Ավելին, ստեղծված իրականությունը պահանջում էր նոր մոտեցում նաև պետության արտաքին քաղաքականության մշակման ու ձևավորման հարցում: Այս, արդեն նոր արտաքին քաղաքականությունը, որի ձևավորումը տեղի էր ունենում ոչ թե տեսական բանավեճերի, այլ հստակ և Ռուսաստանի ազգային շահերը շոշափող բավականին բարդ միջազգային խնդիրների վերաբերյալ լուծումների փնտրտուքի գործընթացում, պետք է լուծում առաջարկեր մի շարք բարդ խնդիրների: Բանն այն է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո խնդիր էր առաջացել նորից «վերականգնակերպել» փլուզումից հետո մնացած աշխարհաքաղաքական տարածությունը, ԱՊՀ տարածքում բռնկված կոնֆլիկտների քաղաքական լուծման մեխանիզմներ մշակել, պաշտպանել Ռուսաստանի սահմաններից դուրս հայտնված հայրենակիցների իրավունքները, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ հարաբերությունների նոր քաղաքական հիմքը դնել և, ընդհանրապես, վերահաստատել արտաքին աշխարհի հետ հարաբերությունների մեխանիզմները¹: Բացի այդ, խնդիր կար նաև վերագնահատել և որոշակիորեն վերափոխել ու ձևափոխել հարաբերություններն արդեն նոր ձևավորված մերձակա հարևանների հետ: Հենց այս խնդիրներն էլ թելադրում էին արտաքին քաղաքական գծի ձևավորման տրամաբանությունն ու բովանդակությունը:

¹ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия. Десять лет внешней политики страны. М., 2001, էջ 15:

Սակայն Խորհրդային Միության փլուզումը բավականին անսպասելի էր ու կտրուկ, որի հետևանքով ո՛չ քաղաքական ղեկավարությունը, ո՛չ էլ հասարակությունը ամբողջական պատկերացում չունեին երկրի հետագա զարգացման ուղիների, այդ թվում նաև նրա արտաքին քաղաքական գերակայությունների վերաբերյալ: Այդ մասին 1992 թ. հոկտեմբերի 6-ին Գերագույն խորհրդի նիստում բաց և անկեղծ հայտարարել է Ռուսաստանի նախագահ Ելցինը. «Ռուսաստանի ցնցումային անցումային դրությունը թույլ չի տալիս հստակ տեսնելու նրա մշտական ու միաժամանակ նոր կերպարը և պատասխան ստանալ այն հարցերին, թե «Ինչի՞ց ենք մենք հրաժարվում: Ի՞նչ ենք ցանկանում վերականգնել ու նորից ստեղծել»²: Բացի այդ, արտաքին քաղաքականության ձևավորման ու նախանշման գործընթացն անցնում էր Ռուսաստանի ներսում տարբեր խմբավորումների պայքարի թոհուրոհում, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր շահերն ու գաղափարախոսությունը, փոփոխվող աշխարհում նոր Ռուսաստանի ինքնորոշման իր մոդելը³: Ռուսաստանի ներքաղաքական բարդ իրավիճակն ու տնտեսական բարդություններն էլ ավելի էին ճնշում արտաքին քաղաքականության նախանշման ու իրագործման գործընթացների վրա: Ուստի այս ամենը ստիպում էր, որ Ռուսաստանն ավելի իրատեսորեն գնահատեր միջազգային իրողություններն ու պրագմատիկ մոտեցում ցուցաբերեր սեփական խնդիրների ու նպատակների լուծման գործում: Այս իրավիճակում արտաքին քաղաքականության համար միակ վստահելի ուղենիշ կարող էր ծառայել ազգային շահերի հետևողական պաշտպանությունը, քանի որ միայն այս կերպ հնարավոր կլիներ համահունչ արձագանքել ժամանակակից վտանգներին ու մարտահրավերներին, միջազգային խնդիրների վերաբերյալ մշակել գիտակցված դիրքորոշում, նպատակալացորեն հարաբերություններ կառուցել մյուս պետությունների հետ⁴:

Չետևաբար, տրամաբանական հարց առաջացավ, թե որոնք են Ռուսաստանի ազգային շահերը, որոնք են երկրի արտաքին քաղաքական գերակայությունները: Խորհրդային արտաքին քաղաքականությունից ժառանգություն էր մնացել «գերտերության» հոգեբանությունը, հաճախ երկրի համար ներքին միջոցների անտանելիության աստիճան լարման գնով բոլոր նշանակալից միջազգային գործընթացներին մասնակցելու ձգտումը: Արդեն նման մոտեցումն անհամատեղելի էր բազմաթիվ ներքին չլուծված հարցերի հետ: Առողջ տրամաբանությունը հուշում էր, որ տվյալ պատմական փուլում արտաքին քաղաքականությունը կոչված էր «սպասարկելու» երկրի ներքին զարգացման կենսա-

² **Иванов И. С.** Внешняя политика России на рубеже XXI века: Проблемы формирования, эволюции и преемственности // “Внешняя политика и безопасность современной России. 1991–2002”. Хрестоматия. Т. 1. М., 2002, с. 207.

³ Տե՛ս **Романенко Сергей.** Внешняя политика новой России. <http://polit.ru/article/2009/10/22/vnropol/>

⁴ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия, էջ 16:

կան շահերը, այն է՝ վստահելի անվտանգության ապահովում, տնտեսական կայուն զարգացման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծում, երկրի միասնականության ու ամբողջականության, սահմանադրական կարգի հիմքերի ապահովում, քաղաքացիական հասարակության համախմբում, արտերկրում քաղաքացիների և համերկրացիների իրավունքների պաշտպանություն⁵: Բացի այդ, տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանի համար սկզբունքային նշանակություն ուներ արտաքին քաղաքական միջոցների «տնտեսումը», «ներկայություն հանուն զուտ ներկայության» սկզբունքից հրաժարումը պետք է համադրվեր ակտիվ, բազմավեկտոր արտաքին քաղաքականության հետ, որն ուղղված էր լինելու բոլոր հնարավորությունների օգտագործմանն այնտեղ, որտեղ այն կարող էր նշանակալի ու իրական ազդակ դառնալ երկրի ներքին զարգացմանը:

Այսպիսով, մինչև 1990-ականների կեսերն ընկած ժամանակահատվածը Ռուսաստանի արտաքին քաղաքականության ձևավորման փուլն էր, որն, ի տարբերություն խորհրդայինի, հենց սկզբից ընթանում էր որակապես տարբեր իրավական և հասարական-քաղաքական միջավայրում, և որի հիմնական բնորոշիչ գծերն էին.

- Քաղաքական և հասարակական կյանքի ժողովրդավարացման հետևանքով արտաքին քաղաքականության ձևավորման մեխանիզմների արմատական փոփոխությունները:

- Օտար երկրներին սահմանակից տարածաշրջանների և տեղական իշխանությունների հետ դաշնության սուբյեկտների և տարածաշրջանների արագ և սկզբնական շրջանում անկազմակերպ հարաբերումը:

- Խորհրդային արտաքին քաղաքական քարոզչության և արտասահմանում երկրի որոշակի կերպարի ձևավորման այլ մեխանիզմների ամբողջական փլուզման պայմաններում կտրուկ անցումը արտաքին քաղաքականության տեղեկատվական ազատականացման:

- Առևտրատնտեսական, ներդրումային համագործակցությունների, կրթության, մշակույթի ոլորտներում փոխանակումների և մի շարք այլ միջազգային կապերի զարգացման գործառույթների փոխանցումը ոչ պետական ոլորտին և այլն⁶:

Այս իրողություններն իրենց արտացոլումը պետք է գտնեին Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգում, որը կոչված էր համախմբելու և համակարգելու երկրի արտաքին քաղաքական գործունեության սկզբունքները, նախանշելու գերակայությունները, մշակելու վերջիններիս իրագործման և երկրի առջև ծառայած մարտահրավերների և խնդիրների դիմագրավման ու հաղթահարման մեխանիզմները: Արտաքին քաղաքականության հայեցակարգը պետք է արտահայտեր ընդհանուր աշխարհայացքը, որի վրա հենվելու էր արտաքին քաղաքական բուն գործունեությունը: Ռուսաստանի արտաքին

⁵ Տե՛ս **Иванов И. С.** Внешняя политика России на рубеже XXI века, էջ 209:

⁶ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия, էջ 12-13:

քաղաքականության սկզբնական փուլն իր վրա կրեց այս ընթացքում հասարակության տրամադրության մեջ տիրող փոփոխությունների ազդեցությունը: Ստայնություն կար, թե արտաքին քաղաքական գծի և ուղենիշների կտրուկ փոփոխմամբ հնարավոր կլինի լուծել թե՛ ներքին, թե՛ արտաքին շատ խնդիրներ: Սպասվում էր, որ արևմտյան երկրների հետ նախկին առճակատման քաղաքականությունից մերձեցման քաղաքականության կտրուկ անցման դեպքում ինքնաբերաբար կփոխվի այդ երկրների վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ և կապահովվի քաղաքական ու տնտեսական զանգվածային աջակցություն: Հենց այս բավականին ուռճացված ակնկալիքներն էլ իրենց դրոշմը դրեցին Ռուսաստանի արտաքին քաղաքականության 1993 թ. ապրիլի 23-ին հաստատված հայեցակարգի վրա⁷: Այս հայեցակարգի հիմնական գաղափարախոսությունը բավականին էական ազդեցություն է կրել ինչպես ժամանակի տրամաբանությունից, այնպես էլ 1990-1996 թթ. ՌԴ արտգործնախարար Կոզիրևի գաղափարներից: Նա գտնում էր, որ «ժողովրդավարական Ռուսաստանի համար ԱՄՆ-ը և արևմտյան մյուս ժողովրդավարական երկրները նույնքան բնական բարեկամներ են և ապագայում՝ դաշնակիցներ, որքան նրանք թշնամիներ էին ամբողջատիրական ԽՍՀՄ-ի համար»⁸: Եվ այդ ամենը հիմնավորվում էր այն համոզմամբ, որ «գործընկերությանն այլընտրանք չկա: Գործընկերությունից հրաժարումը կնշանակեր կորցնել երկակի առաջադրանքի լուծման համար ստեղծված պատմական հնարավորությունը: Իսկ այդ խնդիրն էր. ձևավորել ռուսական ժողովրդավարական բաց պետություն և հետկոնֆլիկտային անկայուն աշխարհը դարձնել կայուն և ժողովրդավարական»⁹:

Վերոհիշյալ հայեցակարգը բավականին հիմնարար բնույթ էր կրում, որը գալիս էր ոչ միայն նախանշելու նոր Ռուսաստանի մոտեցումներն ու տեսակետներն ամենատարբեր հարցերի ու երևույթների վերաբերյալ, այլև բովանդակում էր առկա իրողությունների վերագնահատումներ: Այն իր մասշտաբներով ու ընդգրկվածությամբ իրավամբ սահմանադրություն էր Ռուսաստանի նոր արտաքին քաղաքականության համար, որը, անշուշտ, կրում էր ժամանակի ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնների ազդեցությունը:

Այս հայեցակարգը նպատակաուղղված էր Ռուսաստանի՝ որպես ազատ և ժողովրդավարական երկրի վերածննդին, ռուսաստանցիներին արժանի կյանք և երկրին ֆինանսատնտեսական անկախություն երաշխավորող ժամանակակից դինամիկ տնտեսության ձևավորման համար բարենպաստ պայմաններ ապահովելուն, ինչպես նաև միջազգային հանրության շրջանակ Ռուսաստանի համար իրավահավասար և

⁷ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия, էջ 13-14:

⁸ **Козырев А. В.** Стратегия партнерства // “Внешняя политика и безопасность современной России. 1991–2002”, с. 182.

⁹ Նույն տեղում:

բնական մուտք ապահովելուն՝ որպես բազմադարյան պատմությամբ, յուրահատուկ աշխարհաքաղաքական դիրքով, բավարար ռազմական հզորությամբ, նշանակալի տեխնոլոգիական, ինտելեկտուալ ներուժով հզոր պետություն: Կարևորագույն խնդիր էր ռազմական բախումների դադարեցումն ու Ռուսաստանի շրջակայքում առկա կոնֆլիկտների կարգավորումը, Ռուսաստանի տարածքում դրանց տարածումը թույլ չտալը և մերձակա արտերկրում մարդու և փոքրամասնությունների, հատկապես՝ էթնիկ ռուսների և ռուսախոս բնակչության իրավունքների խստիվ պահպանման ապահովումը: Որպես ուղենիշ մատնանշվում էր Ռուսաստանի միասնության ու տարածքային ամբողջականության պահպանումը¹⁰:

Հայեցակարգն ամրագրում էր, որ գաղափարախոսությունների պայքարն ավարտվել է, և ժամանակն է տնտեսական, դիվանագիտական, ռազմական և այլ միջոցներով հոգ տանելու Ռուսաստանի կարիքների մասին: Իսկ հարևան առաջատար ժողովրդավարական և տնտեսապես զարգացած երկրների հետ զործընկերության առումով հայեցակարգը իրավահավասարություն սահմանելու մասին էր խոսում: Բացի այդ, խորհրդային աշխարհայացքից ռուսաստանյանին անցում կատարելով ընդգծվում էր, որ Արևմուտքը դադարում է լոկ ուժային իմաստով ռազմաքաղաքական հասկացություն լինել, սակայն մնում է աշխարհի տնտեսության և միջազգային հարաբերությունների կարևորագույն կենտրոններից մեկը: Հայեցակարգը երկբևեռ համակարգի փոխարեն մատնանշում էր բազմաբևեռ համակարգ, որը բնութագրվում է որպես գլոբալ երկբևեռության անհետացման հետևանքով միջազգային քաղաքականության բազմազանեցում և տարածաշրջանային կենտրոնաուժային հարաբերություններ: Ավելին, Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական հիմնական ուղղություններին նվիրված բաժնում անդրադառնալով ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ հարաբերություններին (համապատասխանաբար՝ 4-րդ և 5-րդ կետեր), նշվում էր, որ տեսանելի հեռանկարում ԱՄՆ-ի հետ հարաբերությունները Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների սանդղակում կմնան առաջնային, ինչը կհամապատասխանի միջազգային հարթակում ԱՄՆ-ի դերին ու կշռին: Բացի այդ, ԱՄՆ-ի հետ բովանդակալից հարաբերությունների զարգացումը ի զորու է դյուրացնել Ռուսաստանի ներքին տնտեսական բարեփոխումների անցկացման համար արտաքին բարենպաստ պայմանների ձևավորումը: Իսկ Եվրոպական երկրների հետ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերությունները կարևորվում էին, քանի որ դրանք առաջնային նշանակություն ունեին ժողովրդավարական երկրների ընկերակցություն մտնելու, նոր պայմաններում անվտանգություն ապահովելու համար:

¹⁰ Տե՛ս «Концепция внешней политики Российской Федерации» // «Внешняя политика и безопасность современной России. 1991–2002», էջ 19-51:

ԱՊՅ երկրների (մերձակա արտերկիր) հետ հարաբերությունների խնդիրն արժարժվում էր հայեցակարգի «Արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղություններ» բաժնի առաջին իսկ հատվածում, և այն դիտարկվում էր Ռուսաստանի անվտանգության, ռուսական բարեփոխումների ապագայի, տվյալ երկրներում ռուսաստանցիների իրավունքների համատեքստում: Շեշտադրվում էր, որ «նոր հիմքերի վրա տնտեսական և տրանսպորտային կապի հաստատումը, կոնֆլիկտների կարգավորումը և մեր սահմանների երկայնքով կայունության հաստատումը Ռուսաստանի նորմալ զարգացման, հեռավոր արտերկրում նրա արտաքին քաղաքականության արդյունավետ իրականացման կարևորագույն պայմաններն են»: Սակայն Ռուսաստանը նոր «կենտրոնի» դեր ստանձնելու հավակնություններ չունի, քանի որ ռուսաստանյան հետաքրքրություններն այնքան էլ շատ չեն, որ դրանց իրագործման համար վճարվի ցանկացած գին: Ավելին, հստակեցվում էր, որ հետաքրքրությունը փոխադարձ է, և ծագած խնդիրների փոխզիջումային լուծմանը համաձայնություն տալով, Ռուսաստանը չի պատրաստվում վճարել միակողմանի գիշումներով ու Ռուսաստանի ծագում ունեցողների իրավունքների ոտնահարմամբ: Բացի այդ, համաձայնությունների միակողմանի չկատարման դեպքում Ռուսաստանն իրեն իրավունք էր վերապահում միջազգային իրավունքի շրջանակներում ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ մերձակա արտերկրի հետ հարաբերությունները պարզելու համար:

Հայեցակարգում ամրագրվել էր, որ ընթանում է Ռուսաստանի մերձակա աշխարհաքաղաքական շրջապատի ձևավորման բարդ գործընթաց, որի ելքը մեծապես կարող է կախված լինել հանդեպ, ծայրահեղ դեպքերում նաև ուժային միջոցների կիրառմամբ՝ միջազգային իրավունքի սկզբունքները՝ ներառյալ փոքրամասնությունների իրավունքները, հաստատելու, կայուն բարիդրացիություն ձեռք բերելու Ռուսաստանի կարողությունից:

Հենց ԱՊՅ երկրների հետ հարաբերությունների առումով որդեգրած «սառնությունը» նկատի ունենալով էլ այս հայեցակարգն ու նախարար Կոզիրևի քաղաքական գիծը քննադատության են արժանացել: Քննադատները նշում էին, որ ԱՊՅ երկրների հանդեպ մեկուսացումը հանգեցրեց տարածաշրջանում ՌԴ ազդեցության կտրուկ անկման, ինտեգրացիոն գործընթացների կասեցման և ազգայնականության աճի ինչպես այդ երկրներում, այնպես էլ Ռուսաստանում: Այսպիսով, Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ «ատլանտիզմի» փոլը հանգեցրեց հասարակության մեջ հակաարևմտյան տրամադրությունների աճին և միջազգային ասպարեզում Ռուսաստանի ազդեցության կորստին¹¹: Ուստի պատահական չէր, որ այդ բացը լրացնելու համար արդեն 1995 թ. սեպտեմբերի 14-ին ՌԴ նախագահի 940 հրամանագրով

¹¹ Տե՛ս «Основные направления внешней политики России 1991–2004 гг.» <http://ksprotoss.livejournal.com/1518.html>

հաստատվեց «ԱՊՅ անդամ-երկրների հետ Ռուսաստանի ռազմավարական ուղեգիծ» վերտառությամբ փաստաթուղթը¹², որում ԱՊՅ զարգացումը դիտվում է որպես ՌԴ կենսական շահերին համապատասխանող, իսկ ԱՊՅ երկրների հետ հարաբերությունները՝ որպես համաշխարհային քաղաքական և տնտեսական կառույցներում Ռուսաստանին ներգրավելու կարևոր գործոն: Այստեղ ընդգծվում է, որ ԱՊՅ անդամ-երկրների հետ հարաբերությունների առաջնայնությունը ՌԴ քաղաքականության մեջ պայմանավորվում է տնտեսության, պաշտպանության, անվտանգության, ռուսաստանցիների իրավունքների պաշտպանության ոլորտներում Ռուսաստանի գլխավոր կենսական շահերի՝ տվյալ երկրներում կենտրոնացվածությամբ: Այդ շահերի իրագործումը կազմում է ազգային անվտանգության ապահովման հիմքը, և բարձրաձայնվում է, որ ԱՊՅ երկրների հետ արդյունավետ համագործակցությունը Ռուսաստանի ներսում կենտրոնախույս ուժերին հակազդող գործոն է: Եվ որպես ԱՊՅ երկրների հանդեպ Ռուսաստանի քաղաքականության հիմնական խնդիր առանձնացվում է նաև հետմիութենական տարածքում միջպետական, քաղաքական և տնտեսական հարաբերությունների նոր համակարգի ձևավորման մեջ Ռուսաստանի՝ որպես առաջատար ուժի դերի ամրագրումը: Այս դրույթը կարելի է համարել որոշակի շեղում ՌԴ արտաքին քաղաքականության 1993 թ. հայեցակարգից, քանի որ այնտեղ ամրագրվում էր, որ ԱՊՅ շրջանակներում «Ռուսաստանը նոր «կենտրոնի» դեր ստանձնելու հավակնություններ չունի»: Բացի այդ, փաստաթղթում առանձնացվում են տնտեսական, ազգային անվտանգության, հումանիտար համագործակցության և մարդու իրավունքների, միջազգային խնդիրների լուծման հարցում գործունեության կոորդինացման և համաշխարհային հանրության հետ փոխգործակցության ոլորտները, դրվում են բավականին հստակ հանձնարարականներ ու խնդիրներ: Մասնավորապես, ԱՊՅ շրջանակներում փոխշահավետ տնտեսական համագործակցությունը դիտվում է որպես «հիմնարար նախապայման՝ ԱՊՅ երկրների հետ փոխհարաբերություններում հարցերի ողջ համակարգի լուծման համար»: Իսկ ազգային անվտանգության բաժնում միանշանակ ընդգծվում է. «Երրորդ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում հասնել նրանց կողմից այն բանի ըմբռնման, որ այս տարածաշրջանը (ԱՊՅ - Գ. Գ.) նախ և առաջ հանդիսանում է Ռուսաստանի շահերի գոտի»: Յետաքրքիր խնդիրներ են առանձնացվում հումանիտար համագործակցության և մարդու իրավունքների ոլորտում. «Ապահովել ռուսաստանյան հեռուստառադիոհեռարձակումներ մերձակա արտերկրում, աջակցել ռուսաստանյան մամուլի տարածմանը տվյալ տարածաշրջանում, իրականացնել ԱՊՅ երկրների համար պե-

¹² Стѐу «Стратегический курс России с государствами – участниками Содружества Независимых Государств». <http://www.mid.ru>

տական գործիչների պատրաստումը Ռուսաստանում»¹³: «Հատուկ ուշադրություն դարձնել Ռուսաստանի դիրքերի վերականգնմանը որպես հետխորհրդային տարածաշրջանում գլխավոր կրթական կենտրոնի՝ նկատի ունենալով ԱՊՀ երկրներում Ռուսաստանի հանդեպ բարեկամական ոգով երիտասարդ սերնդի դաստիարակման անհրաժեշտությունը»¹⁴: Հաջորդ ոլորտի վերաբերյալ նշվում է. «ԱՊՀ-ում մեր գործընկերներին համառորեն և հետևողականորեն հանգեցնել միջազգային խնդիրների վերաբերյալ ընդհանուր դիրքեր մշակելուն և միջազգային ասպարեզում գործողությունները կոորդինացնելուն»՝ «հիմնական ջանքերը կենտրոնացնելով ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում ԱՊՀ երկրների դիրքորոշումների, ինչպես նաև ՆԱՏՕ-ի, ԵՄ-ի, Եվրոպայի խորհրդի վերաբերյալ նրանց մտեցումների համաձայնեցման վրա»: Եվ որպես եզրափակում ընդգծվում է, որ ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերություններում գլխավոր խնդիրներից է «ԱՊՀ երկրների հետ Ռուսաստանի հարաբերություններն առճակատման ոգով կառուցելու անթույլատրելիությունը»:

Ավելին, բուն արտաքին քաղաքական փորձը հստակություն է մտցնում նաև արևմտյան երկրների հետ հարաբերություններում օպտիմալ գծի ընտրության հարցում: Պետական ու դիվանագիտական գործիչների, լայն հասարակայնության շրջանում հստակ պատկերացում է ձևավորվում այն մասին, որ Ռուսաստանի համար հավասարապես անընդունելի են ինչպես չարդարացված զիջումները՝ ի վնաս սեփական շահերի, այնպես էլ ԱՄՆ-ի, Արևմտյան Եվրոպայի երկրների և ճապոնիայի հետ առճակատումը: Ազգային շահերի հետևողական, անհրաժեշտության դեպքում՝ նաև կտրուկ, պաշտպանությունը չի հակասում ժողովրդավարական երկրների ընկերակցությանն ու միջազգային տնտեսական կառույցներին Ռուսաստանի հետագա ինտեգրմանը¹⁵:

Ինչևէ, առաջին հայեցակարգը կոչված էր ապահովելու անցումը դեպի նոր իրականություն, ինչն էլ կատարվեց, բնականաբար, ոչ առանց թերությունների: Որդեգրած ուղեգծի և դրա գործնական դրսևորման հրապարակային քննադատությունը բավականին լայն տարածում է գտնում: Ըստ այդմ նախագահը ստիպված է լինում 1996 թ. փոխել իր արտգործնախարարին՝ Կոզիրևին փոխարինելով Պրիմակովով: Վերջինս որոշակիորեն տարբերվում էր իր նախորդից և ավելի գործնական ու իրատեսական քաղաքականություն է որդեգրում: Նրա քաղաքական գաղափարները հիմնականում ամփոփվում էին Մոսկվայի շուրջը հետխորհրդային տարածաշրջանի ինտեգրման և այլ երկրների հետ կոալիցիաների միջոցով ԱՄՆ-ի միաբևեռային հավակնությունները չեզոքացնելու ծրագրերում: Դրանք իրենց ամրագրումն են ստանում 1997

¹³ «Стратегический курс России...».

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия, էջ 17-18:

թ. ընդունված «Ազգային անվտանգության հայեցակարգում»: Իբրև հիմնարար փաստաթուղթ, նրանում վերլուծվում են Ռուսաստանի շահերին հակասող առկա արտաքին վտանգները: Այս փաստաթղթի հիման վրա էլ հետագայում ճշակվում է Ռազմական դոկտրինը, որը կոչված էր ապահովելու առաջին հայեցակարգից երկրորդին կատարելիք անցումը և որոշակիորեն հիմք էր հանդիսանալու վերջինիս համար:

Կատարված փոփոխությունների շնորհիվ Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը «դարձավ ավելի հավասարակշռված Արևմուտքի և Արևելքի հետ հարաբերություններում, արտաքին քաղաքական կուրսն ավելի համապատասխանեց երկրի ազգային շահերին», ինչը փաստվում էր Սոցիալական և ազգային խնդիրների ռուսական անկախ ինստիտուտի զեկույցում¹⁶: Իսկ արդեն նոր հայեցակարգը հաստատած նախագահ Պուտինը նշում է, որ «արտաքին քաղաքականությունը ներքաղաքական իրավիճակի ցուցիչ է և նշանակալի գործոն: Այստեղ չպետք է լինեն պատրանքներ: Այն հանգամանքից, թե ինչքան գրագետ ու արդյունավետ կօգտագործենք մեր դիվանագիտական ներուժը, կախված է ոչ միայն մեր երկրի հեղինակությունը միջազգային ասպարեզում, այլ նաև բուն Ռուսաստանում քաղաքական, տնտեսական դրությունը»¹⁷: Այսպիսով, պարզ է, որ Ռուսաստանի նոր կամ նորացված քաղաքականության տեսլականը լինելու էր ավելի գործնական, ավելի վճռական ու, զուգե՛ն՝ ավելի արդյունավետ:

Այս նոր տեսլականն իր մարմնավորումը գտավ 2000 թ. հուլիսի 10-ին հաստատված «ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգի» նոր խմբագրության մեջ¹⁸: Վերջինիս բովանդակությունը պայմանավորված էր ոչ միայն ներքին խնդիրների և երկրի շահերի գիտակցմամբ, այլև նոր գլոբալ մարտահրավերներին ընդառաջ գնալու Ռուսաստանի դիրքորոշումը հստակեցնելու անհրաժեշտությամբ և այն բանով, թե միջազգային հարաբերությունների ինչպիսի համակարգն է առավել համապատասխանում նրա ազգային շահերին¹⁹:

Ըստ նոր հայեցակարգի՝ 21-րդ դարի սկզբին ձևավորված միջազգային իրավիճակը պարտադրեց վերաիմաստավորել Ռուսաստանի շուրջ ստեղծված իրավիճակը, ռուսաստանյան արտաքին քաղաքականության գերակայություններն ու դրանց իրականացման ներուժային ապահովվածությունը: Ավելին, հայեցակարգում արձանագրվում է, որ չեն իրականացել Ռուսաստանի և շրջակա աշխարհի միջև իրավահավասար, փոխշահավետ և գործընկերային հարաբերություններ ձևավորելու ակնկալիքները: Ըստ այդմ՝ այստեղ նպատակ է դրվում ապա-

¹⁶ Տե՛ս «Внешняя политика России: мнение экспертов». М., 2001, էջ 10:

¹⁷ **Путин В. В.** Выступление Президента Российской Федерации с Посланием Федеральному Собранию Российской Федерации (о положении в стране и основных направлениях внутренней и внешней политики государства) 3 апреля 2001 г. М., 2001, с. 40.

¹⁸ Հայեցակարգից բոլոր հետագա մեջբերումներն ըստ՝ «Концепция внешней политики Российской Федерации», www.mid.ru

¹⁹ Տե՛ս **Иванов И. С.** Новая российская дипломатия, էջ 19-20:

հովելու երկրի վստահելի անվտանգությունը, ամրապնդելու և պահպանելու նրա ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը, միջազգային ասպարեզում անուր և հեղինակավոր դիրքերը: Բացի այդ, նպատակ էր դրվում ներգործել համաշխարհային գործընթացների վրա՝ կայուն, արդար և ժողովրդավարական աշխարհակարգի ձևավորման նպատակով: Այսինքն՝ արդեն նպատակ էր դրվում ոչ թե պարզապես ինտեգրվել որոշակի երևույթների և կառույցների, այլ գործընթացները հարմարեցնել սեփական շահերին: Արտաքին քաղաքական գործունեության նպատակներ են հռչակվում նաև՝ Ռուսաստանի աստիճանական զարգացման համար բարենպաստ արտաքին պայմանների ապահովումը, ռուսական սահմանների երկայնքով բարիդրացիության գոտու ձևավորումը, ՌԴ սահմանակից շրջաններում առկա կոնֆլիկտների հաղթահարումը և հնարավոր օջախների առաջացման կանխումը, օտար երկրների և միջպետական միավորումների հետ համաձայնության և համընկնող շահերի փնտրտուքը, Ռուսաստանի քաղաքացիների և արտերկրում գտնվող համերկրացիների իրավունքների և շահերի համակողմանի պաշտպանությունը, արտերկրում Ռուսաստանի դրական ընկալմանը նպաստելը, աշխարհում ռուսերենի և Ռուսաստանի ժողովուրդների մշակույթի ժողովրդականացումը:

Վերոնշյալ հանգամանքները գալիս են ապացուցելու, որ այս հայեցակարգն ամրագրում էր ավելի շատ նախաձեռնողական քաղաքականություն, որն ավելի ինքնավստահ էր և ավելի հստակ էր պատկերացնում իր շահերը և նպատակները: Նոր հայեցակարգի, հետևաբար, նաև նոր արտաքին քաղաքական ուղեգծի համար կարևորագույն նպատակ էր աշխարհակարգի խնդիրը, ինչի վերաբերյալ հայեցակարգում հստակեցվում է, որ Ռուսաստանը կձգտի միջազգային հարաբերությունների բազմաբևեռ համակարգի ձևավորմանը: Ապա այս հարցին անդրադարձ է կատարվում ՌԴ արտաքին քաղաքականության գերակայությունների բաժնում, որտեղ հենց սկզբից արժարծվում է նոր աշխարհակարգի ձևավորման խնդիրը: Ի մասնավորի ասվում է, որ Ռուսաստանը հետաքրքրված է միջազգային հարաբերությունների կայուն համակարգի ձևավորմամբ, որը հենված կլինի իրավահավասարության, փոխադարձ հարգանքի և փոխշահավետ համագործակցության սկզբունքների վրա: Ինչպես նաև ընդգծվում է, որ միջազգային հարաբերությունների կարգավորման գլխավոր կենտրոնը 21-րդ դարում պետք է մնա ՄԱԿ-ը, որի դերի նվազեցում Ռուսաստանը թույլ չի տա: Անդրադառնալով միջազգային անվտանգությանը (2-րդ գերակայություն), նշվում է, որ Ռուսաստանը կողմ է միջազգային հարաբերություններում ուժի գործոնի դերի նվազեցմանն ու պատրաստ է ԱՄՆ-ի հետ երկկողմ համաձայնությունների հիման վրա կրճատել իր միջուկային զինանոցը:

Արտաքին քաղաքական գերակայությունների ցանկում կարևոր տեղ է տրված և նախորդի համեմատությամբ կարևոր նորություն է «Ար-

տաքին քաղաքական գործունեության տեղեկատվական ուղեկցման» դրույթը, համաձայն որի՝ «ՌԴ արտաքին քաղաքական գործունեության կարևոր ուղղություն է միջազգային հիմնական խնդիրների վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշման, նրա արտաքին քաղաքական նախաձեռնությունների, ինչպես նաև ռուսաստանյան մշակույթի, գիտության, ինտելեկտուալ արվեստի ձեռքբերումների վերաբերյալ համաշխարհային հանրության լայն շրջանակների ուշադրությանն առարկայական և հստակ տեղեկատվություն հասցնելը»:

Տարածաշրջանային գերակայությունների շրջանակներում առաջինն իսկ անդրադառնալով ԱՊՀ անդամ-երկրների հետ հարաբերություններին, դրանք որակվում են որպես երկրի արտաքին քաղաքականության գերակա ուղղություն, որի շրջանակներում պետք է ապահովվի ԱՊՀ անդամ-երկրների հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության համապատասխանեցումը երկրի ազգային անվտանգության խնդիրներին: Եվ շեշտը դրվում է բոլոր երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների և ռազմավարական գործընկերության զարգացման վրա: Առավել կարևորվում է անդամ-երկրներում առկա կոնֆլիկտների համատեղ կարգավորումը:

Եվրոպական երկրների հետ հարաբերությունները բնութագրվում են որպես ավանդաբար գերակա ուղղություն և ընդգծվում է, որ այս ուղղության գլխավոր նպատակն է համաեվրոպական կայունության ու համագործակցության կայուն և ժողովրդավարական համակարգի ստեղծումը: Եսկան անդրադարձ է կատարվում նաև ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններին. այս կառույցի հետ համագործակցության առումով Ռուսաստանը հիմք է ընդունում մայրցամաքում անվտանգության և կայունության պահպանման շահերը: Սակայն բարձրաձայնվում է, որ մի շարք չափանիշներով ՆԱՏՕ-ի ներկայիս քաղաքական ու ռազմական դրույթները չեն համընկնում ՌԴ անվտանգության շահերի հետ, երբեմն նաև հակասում են: Ընդգծվում է նաև, որ Ռուսաստանը պահպանում է բացասական դիրքորոշումը ՆԱՏՕ-ի ընդլայնման վերաբերյալ: Անդրադառնալով ռուս-ամերիկյան հարաբերություններին, առաջին հերթին շեշտադրվում են հարաբերություններում առկա տարածայնությունները: Սակայն նշվում է, որ անկախ մի շարք սկզբունքային հարցերում առկա լուրջ տարածայնություններից, ռուս-ամերիկյան գործակցությունն անհրաժեշտություն է միջազգային իրավիճակի բարելավման և գլոբալ ռազմավարական անվտանգության ապահովման առումով:

Այսպիսով, 2000 թ. ընդունված Արտաքին քաղաքականության հայեցակարգն ավելի նախաձեռնողական լինելուց բացի, չէր խուսափում բարձրաձայնել տարածայնություններն ու հնարավոր բախումները, ինչը նշանակում է, որ, ի տարբերություն նախորդ հայեցակարգի, այժմ որդեգրվել էր սեփական շահերի պաշտպանության առավել կտրուկ և վճռական դիրքորոշում, որի մասին էլ պաշտոնապես բարձրաձայնվում

էր: Այստեղ բավականին հստակ խոսվում է ոչ արևմտյան երկրների հետ համագործակցության և բազմաբևեռ աշխարհի կայացմանը նպաստելու համատեղ հստակ մտադրության մասին: Այս մտադրությունը կյանքի կոչվեց արդեն 2001 թ. հուլիսի 16-ին Մոսկվայում կնքված «ՌԴ և ՉԺՅ միջև բարիդրացիության, բարեկամության և համագործակցության մասին պայմանագրով», ինչպես նաև 2005 թ. հուլիսի 1-ին կնքված «21-րդ դարում միջազգային կարգի մասին ՌԴ և ՉԺՅ համատեղ հայտարարությամբ», որում կողմերը ելնում են «բազմաբևեռ աշխարհի և նոր աշխարհակարգի ձևավորման իրենց մղումից»²⁰: Նույն տրամաբանության շրջանակներում է նաև 2001 թ. Շանհայի համագործակցության կազմակերպության ստեղծումը, որի զարգացումը «Ռուսաստանն ու Չինաստանը դիտում են որպես իրենց արտաքին քաղաքականության ռազմավարական կարևոր տարր և մտադիր են Կազմակերպության շրջանակներում շարունակելու իրենց դիրքորոշումների սերտ կոորդինացումը»²¹: Հատկանշական է, որ այս քաղաքականությունը նույնպես ժառանգվել էր նախարար Պրիմակովից, որի գործունեության շնորհիվ 1997 թ. ապրիլի 23-ին Բորիս Ելցինն ու Ցզյան Ցզեմինը Մոսկվայում հրապարակեցին «Բազմաբևեռ աշխարհի և նոր միջազգային կարգի ձևավորման մասին ռուս-չինական համատեղ հռչակագիրը», որում կողմերը գտնում են, որ «ավարտվել է «սառը պատերազմը»: Վերացել է երկբևեռ համակարգը: Արագորեն զարգանում են բազմաբևեռ աշխարհի ձևավորման դրական միտումները, փոխվում են խոշոր երկրների միջև փոխհարաբերությունները, այդ թվում նաև «սառը պատերազմում» նախկին հակառակորդների միջև»: Նրանք շեշտում են. «Ավելի շատ երկրներ են հանգում այն ընդհանուր մոտեցմանը, որ անհրաժեշտ է փոխադարձ հարգանք, հավասարություն և փոխադարձ շահ, այլ ոչ թե գերակայություն և ուժային քաղաքականություն, երկխոսություն և համագործակցություն, այլ ոչ թե առճակատում և հակամարտություն»: Ուստի՝ «Կողմերը հանդես են գալիս հոգևտ նոր, համընդգրկուն նշանակություն ունեցող անվտանգության հայեցակարգի հաստատման: Նրանք գտնում են, որ պետք է վերջ տալ «սառը պատերազմի» հոգեկերտվածքին ու հանդես են գալիս դաշինքային քաղաքականության ընդդեմ»: Եվ՝ «Կողմերը մտահոգություն են արտահայտում ռազմական դաշինքների ընդլայնման և ամրապնդման փորձերի կապակցությամբ, քանի որ այդ միտումը կարող է սպառնալիք առաջացնել առանձին երկրների անվտանգությանը, գլոբալ և տարածաշրջանային մասշտաբով լարվածության աճ խթանել»²²:

²⁰ «Совместная декларация КНР и РФ о международном порядке в XXI веке». <http://www.mid.ru>

²¹ «Совместная декларация Китайской Народной Республики и Российской Федерации». <http://www.mid.ru>

²² «Российско-китайская совместная декларация о многополярном мире и формировании нового международного порядка. Москва, 23 апреля 1997 года» // «Внешняя политика и безопасность современной России. 1991–2002». Хрестоматия. Т. 4. М., 2002, с. 484–486.

2000 թ. հայեցակարգով ամրագրված քաղաքականության համար բավականին ծանրակշիռ ուղենիշ էր տնտեսական շահը: 2000 թ. լույս տեսավ «Ռազմավարություն Ռուսաստանի համար: Օրակարգ նախագահի համար – 2000» փաստաթուղթը, որ հրապարակեց Արտաքին և պաշտպանության քաղաքականության խորհուրդը: Այստեղ առաջարկվում էր հրաժարվել Պրիմակովի ինտեգրացիայի հնացած սկզբունքից և անցում կատարել ընտրովի ներգրավվածության սկզբունքին: Խորհրդի կարծիքով՝ Ռուսաստանը պետք է ինտեգրացիան իրականացնել «ոչ թե վերևից, այլ ներքևից, աջակցելով առանձին ապրանքների և ծառայությունների շուկաների ինտեգրմանը, ստեղծելով վերազգային ֆինանսատնտեսական խմբեր, փոխել պարտքերը սեփականության հետ: Հենց այս մակարդակում համագործակցությանն ու ինտեգրմանը ուղղված քաղաքական աջակցության իրականացմանը պետք է նպատակաուղղվի պետական մարմինների գործունեությունը»²³: Շատ չանցած Անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Իվանովը հայտարարեց, որ տարածաշրջանում ինտեգրացիաները շատ թանկ են արժեցել Ռուսաստանի համար, ուստի երկիրն ԱՊՀ անդամների հետ անցնում է զուտ պրագմատիկ հարաբերությունների: Այս պահից սկսած Ռուսաստանի համար հետաքրքրություն էին ներկայացնում ոչ թե հարաբերություններն առանձին երկրների հետ, այլ նախկին ԽՍՀՄ տարածքում ռազմավարական նշանակության ենթակառուցվածքային առանձին միավորների սեփականաշնորհումը: Տնտեսական գերակայության այս ռազմավարությունը նշանակալի տնտեսական արդյունքներ է տալիս, սակայն նպաստում է կողմերի միջև քաղաքական վստահության մակարդակի նվազմանը²⁴: Պատահական չէ, որ տվյալ ժամանակահատվածում ԱԳ նախարար Իվանովը գրում է. «Մոտակա շրջանում ռուսական արտաքին քաղաքականության մեջ զգալիորեն կաճի տնտեսական դիվանագիտության տեսակարար կշիռը: Այստեղ առաջին գիծ են դուրս գալիս այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Ռուսաստանի տնտեսության ամրապնդման և արտաքին տնտեսական մասնագիտացման թարմացման, միջազգային տնտեսական կազմակերպություններում իրավահավասար մասնակցության ապահովումը, միջազգային շուկաներ դուրս գալու համար ռուսաստանյան ձեռնարկատիրոջը օգնություն ցույց տալը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը, արտաքին պարտքի խնդրի լուծումը»²⁵: Ի վերջո, այս հայեցակարգի նախնական տվյալների ամփոփում կարելի է համարել հենց նույն Իվանովի արտահայտած այն միտքը, որ «Ռուսաստանի ձայնն այժմ համաշխարհային գործերում ավելի վստահ է հնչում»²⁶:

²³ «Стратегия для России. Повестка дня для Президента – 2000». М., 2000.

²⁴ Տե՛ս «Основные направления внешней политики России 1991 – 2004 гг.»:

²⁵ **Иванов И. С.** Внешняя политика России в эпоху глобализации: Статьи и выступления, М., 2002, с. 124:

²⁶ Նույն տեղում, էջ 132:

21-րդ դարի սկզբում միջազգային հարաբերությունների էվոլյուցիան և Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը խնդիր առաջադրեցին նորովի գնահատել իրականությունն ու վերաիմաստավորել արտաքին քաղաքականության առաջնությունները՝ հաշվի առնելով միջազգային հարցերում երկրի աճած դերը, աշխարհում տեղի ունեցող երևույթների համար պատասխանատվության աճը և դրա հետ կապված նոր հնարավորությունները՝ ոչ միայն մասնակցել միջազգային օրակարգի իրագործմանը, այլ նաև ձևավորել այն²⁷: Այս տրամաբանությամբ էլ հրապարակվում է նոր հայեցակարգը արդեն նախագահ Մեդվեդևի օրոք՝ 2008 թ. հուլիսի 12-ին: Սակայն այն իր նախորդից շատ չի տարբերվում, ավելին, շատ հարցերում նույնիսկ բառացի կրկնում է իր նախորդի որոշ դրույթներ: Դա չի նշանակում, որ նոր հայեցակարգն ընդհանրապես նորույթ չի բովանդակում: Նախ՝ այն 2000 թ. հայեցակարգի տրամաբանական շարունակությունն է, միաժամանակ և զարգացումը:

Արտաքին քաղաքականության հիմնական նպատակների շարքում առաջնային դիրքն են գրավում երկրի անվտանգության ապահովումը, նրա ինքնիշխանության ամրապնդումն ու տարածքային ամբողջականության պահպանումը: Հաջորդ նպատակը նախորդ հայեցակարգի համապատասխան դրույթի կատարելագործված և ժամանակի պայմաններին համապատասխանեցված տարբերակն է. «Ռուսաստանի արդիականացման, տնտեսության ինովացիոն զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովում»: Այստեղ նույնպես իր արդիականությունն է պահպանում արդարացի և ժողովրդավարական աշխարհակարգի ձևավորման համար համաշխարհային գործընթացների վրա ներազդելու հրամայականը: Գրեթե նույնությամբ կրկնում է նախորդ հայեցակարգի համապատասխան դրույթը նաև այս պարագայում. «Սահմանակից երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատում, ՌԴ սահմանակից և աշխարհի այլ շրջաններում առկա կոնֆլիկտների և լարվածության օջախների վերացմանը կամ դրանց հնարավոր առաջացման կանխմանը աջակցության տրամադրում»: Փոքր-ինչ ձևափոխված է ներկայացված հաջորդ նպատակը: Այն է. «Աջակցել աշխարհում Ռուսաստանի օբյեկտիվ ընկալմանը՝ որպես սոցիալական ուղղվածություն ունեցող շուկայական տնտեսությամբ և անկախ արտաքին քաղաքականությամբ ժողովրդավարական պետություն»: Որպես ամփոփում հաստատականորեն նշվում է, որ «նոր Ռուսաստանը, կանգնելով ազգային շահերի ամուր հենքի վրա, գլոբալ հարցերում լիարժեք դեր ստացավ»: Այսպիսով, որոշ առումներով կրկնելով, որոշ առումներով էլ ավելի զարգացնելով նախորդ հայեցակարգի դրույթները, այս հայեցակարգը վերահաստատում է ՌԴ որդեգրած իրատեսական ու պրագմատիկ արտաքին քաղաքական ուղեգիծն ու նշում է դրա ավելի խորացման փաստը:

²⁷ Տե՛ս «Концепция внешней политики Российской Федерации». www.kremlin.ru

Տարածաշրջանային գերակայությունների սանդղակում առաջին հորիզոնականը կրկին հատկացնելով ԱՊՀ տարածաշրջանին, Ռուսաստանի Դաշնությունն իր արտաքին քաղաքական այս հայեցակարգով ևս հաստատում է, որ իր արտաքին քաղաքականության գերակա ուղղություն է երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացումը ԱՊՀ անդամ-երկրների հետ: Բացի այդ, հաստատվում է, որ այն երկրների հետ, որոնք համապատասխան պատրաստակամություն կցուցաբերեն, կզարգացվեն ռազմավարական գործընկերության և դաշնակցային հարաբերություններ: ՌԴ տեսանկյունից կարևորվում են ԱՊՀ ներուժի լիարժեք իրացումն ու ՀԱՊԿ զարգացումը: ԱՊՀ վերաբերյալ Ռուսաստանի արտաքին քաղաքական տեսակետի ու դիրքորոշման վերահաստատման մեկ այլ դրույթ էր Դաշնային ժողովում 2009 թ. հունվարի 28-ին ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովի ելույթում տեղ գտած ձևակերպումը. «Կարևորագույն, ես կասեի, բացառիկ գերակայություն է մեզ համար ԱՊՀ տարածաշրջանը»²⁸:

Անդրադառնալով եվրոպական ուղղությանը՝ մատնանշվում է, որ այստեղ Ռուսաստանի գլխավոր նպատակն է համատարածաշրջանային համատեղ անվտանգության ու համագործակցության իրականում բաց, ժողովրդավարական համակարգի ձևավորումը, որը կապահովի եվրատլանտյան տարածաշրջանի միասնությունը՝ թույլ չտալով նրանոր մասնատումը և նախկին խմբավորումների վերածնունդ, որոնց ինքնուրույն պահպանվում է «սառը պատերազմի» ժամանակ ձևավորված եվրոպական ճարտարապետության մեջ: Սա այն առաջարկն էր, որի օգտին բավականին երկար ժամանակ քարոզչական գործունեություն են տանում ընդհուպ Պուտինը և Մեդվեդևը: Այս կետը, թերևս, կարող է համարվել այս հայեցակարգում առավել շեշտադրվող հարց, չնայած այն բավականին շատ հատվածներում նույնությամբ կրկնում է իր նախորդին: Ըստ էության, այս հայեցակարգում իրենց տեղն են գտել մի շարք գաղափարներ ու դրույթներ, որոնք առկա են նաև նախագահ Դմիտրի Մեդվեդևի «Առաջ, Ռուսաստան» հոդվածում²⁹, հատկապես երկրի ներքին զարգացման և տնտեսության բարեփոխման ու բազմազանեցման հարցերի վերաբերյալ դրույթները:

Այսպիսով, փորձելով որոշակիորեն ընդհանրացնել Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքական հայեցակարգերի դրույթներն ու պաշտոնական մոտեցումը, կարող ենք փաստել, որ հայեցակարգի մշակումն անցել է բարդ ու ոչ միանշանակ ուղի: Այս հանգամանքն իր հետագիծն է թողել երկրի արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման առաջին փուլում: Սակայն, հետագայում որոշակիորեն ապահովելով դիվանագիտական ժառանգականություն և հայեցակարգի դրույթները թրծելով ու զարգացնելով հենց բուն գործունեու-

²⁸ Лавров С. В. О приоритетах внешней политики России на современном этапе 29.01.2009. www.mid.ru

²⁹ Стів Медведев Д. Россия, вперед! 10.09.2009, www.kremlin.ru

թյան ընթացքում, դարձավ ավելի իրատեսական ու ավելի համահունչ երկրի ազգային շահերին:

Երկրի արտաքին քաղաքականության առջև ծառայած խնդիրների առումով այդ հայեցակարգերն իրարից զգալիորեն չէին տարբերվում: Առաջնային խնդիր էր երկրի անվտանգության, տարածքային ամբողջականության ու ինքնիշխանության պահպանումը: Շատ կարևոր, հանգուցային տեղ էր գրավում նաև տնտեսական նպատակների խումբը, որը որպես հիմնաքարային սկզբունք առկա է բոլոր հայեցակարգերում և իր շուրջն է համախմբում երկրի արտաքին քաղաքականության մյուս նպատակները:

Արտաքին քաղաքականության տարածաշրջանային գերակայությունների մեջ նույնպես էական փոփոխություններ չեն կատարվել. փոփոխվել են որոշ շեշտադրումներ, որոշ ձևակերպումներ, սակայն ընդհանուր էությունը դրանից շատ չի փոխվել: Մասնավորապես, ԱՊՀ տարածաշրջանը միշտ էլ եղել է առաջնային գերակայություն ՌԴ արտաքին քաղաքականության օրակարգում՝ իր աշխարհագրական դիրքի, ապակայունացման ներուժի և այլ պատճառների բերումով: Ճիշտ է, սկզբնապես ԱՊՀ տարածաշրջանի հանդեպ գործնական ուշադրությունը եղել է ավելի նվազ, քան գործնականում պահանջում էին երկրի իրական շահերը, սակայն արդյունքում վերագնահատումներ տեղի ունեցան և թե՛ դոկտրինալ, թե՛ գործնական մոտեցումները դարձան համահունչ երկրի իրական պահանջներին:

Մյուս գերակայությունների առումով նույնպես շեշտակի փոփոխություններ չկան. կան ձևակերպումների վերանայումներ, որոնք պայմանավորված են շրջակա իրողությունների փոփոխությամբ և տվյալ ժամանակի հստակ պահանջներով:

Այս հայեցակարգերի թրծման ուղին ու կրած զարգացումը Ձբիզնև Բժեզինսկին հետաքրքիր կերպով ընդհանրացնում է հետևյալ կետերում:

1. Ամերիկայի հետ «հասուն ռազմավարական գործընկերության» գերակայություն, ինչը այս գաղափարի որոշ համախոհների համար զուտ եզրույթ էր, որի տակ թաքնված էր գլոբալ համատիրություն:

2. «Մերձակա արտերկրի» վրա շեշտադրում՝ որպես Ռուսաստանի հիմնական հետաքրքրության օբյեկտի, երբ որոշները հետամուտ են Մոսկվայի գերակայությամբ տնտեսական որոշ ինտեգրացիայի, իսկ որոշներն էլ նաև հույս ունեին կայսերական որոշակի վերահսկողության հավանական վերականգնման, այսպիսով ստեղծելով տերություն, որն առավել ի գորու կլինի հավասարակշռել Ամերիկան և Եվրոպան:

3. Հակադաշինք, որը ենթադրում է եվրասիական հակամերիկյան կոալիցիայի նման ինչ-որ բանի ստեղծում՝ նպատակ հետապնդելով նվազեցնել Ամերիկայի գերակայությունը Եվրասիայում³⁰:

³⁰ Տե՛ս **Бжезинский З.** Великая шахматная доска. М., 2006, էջ 121:

Այսինքն, եթե առաջին հայեցակարգը շեշտը դնում էր Արևմուտքի, հատկապես՝ ԱՄՆ-ի հետ «հասուն» և իրավահավասար պայմաններով համագործակցության վրա, ապա երկրորդ հայեցակարգում ավելի հստակ սկսեց ընդգծվել Ռուսաստանի հետաքրքրվածությունը «մերձակա արտերկրով» ու այս տարածաշրջանում երկրի շահերի պաշտպանության անայլընտրանքայնությունը: Այս հանգամանքը կարևորվում էր նաև երկրի՝ միջազգային ասպարեզում ավելի ծանրակշիռ ու ազդեցիկ հանդես գալու տեսանկյունից: Իսկ ահա երրորդ հայեցակարգում ավելի ընդգծված բարձրաձայնվում է ԱՊՀ սահմաններից ավելի ընդլայնված շրջանակներում համագործակցության որևէ համակարգի ստեղծման գաղափարը, որը քաղաքական հարթակներում անվանվեց «Եվրասիական միություն»: Այս մտադրության թիրախային գաղափարներից մեկն էլ Ռուսաստանի ընդգրկումն է ավելի ընդարձակ համակարգի մեջ, ինչը թույլ կտա երկրի ազդեցության սահմաններն ավելի հեռացնել բուն երկրի սահմաններից և այդ համակարգում ընգրկված երկրներին ավելի հեռացնել ամերիկյան ազդեցությունից:

Այսպիսով, ծնունդ առնելով ժողովրդավարացման զգացմունքային ալիքի կարծրատիպերի վերացման թոհուբոհում, ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգն անցավ զարգացման ու կայացման բավականին նշանակալի «դպրոց»: Եթե 1993 թ. հայեցակարգն իր վրա կրում էր ժամանակի ու ձևավորված արևմտականացման մթնոլորտի ազդեցությունն ու ավելի տեսական փաստաթուղթ էր, ապա արդեն 2000 թ. հայեցակարգն ավելի գործնական, ավելի հստակ ու իրատեսական մոտեցում էր որդեգրել, ինչն իրականացվում էր նաև գործնական քաղաքականության մեջ: Իսկ ահա 2008 թ. հայեցակարգը եկավ շարունակելու իր նախորդների որդեգրած գիծն ու առավել խորացնելու դրանցում ամրագրված սկզբունքները և բարձրաձայնելու մինչ այդ ոչ պատշաճ մակարդակով քննարկված դրույթները: Այնուամենայնիվ, երեք հայեցակարգերն էլ մեկ ամբողջության, շարունակաբար զարգացող մեկ երևույթի օրգանական մասերն էին, որոնցից հաջորդը ժառանգելով նախորդի՝ կարևորագույն և գործնական կիրառման մեջ քննություն բռնած դրույթները, ու նորացնում է նրա ոչ արդյունավետ մոտեցումները:

Այդ էվոլյուցիոն զարգացման շնորհիվ այսօր Ռուսաստանի Դաշնությունն առավել ընդգծված տեղ ու դիրք ունի միջազգային ասպարեզում, քան 1990-ականների սկզբին: Սակայն երկրի արտաքին քաղաքական դիրքորոշումն ու վարքը միանման իրավիճակներում ոչ այնքան համանման դրսևորում է ստանում, ինչը, այնուամենայնիվ, կարող է բխել ոչ թե արտաքին քաղաքականության հայեցակարգի ու արտաքին քաղաքական գծի ոչ հստակ և ոչ կայուն բնույթից, այլ երկրի արտաքին քաղաքականության ճկունությունից:

ГРИГОР ГРИГОРЯН – *Внешиполитические приоритеты Российской Федерации: развития и перемены (сравнительный анализ внешнеполитических доктрин РФ 1993, 2000 и 2008 гг.)*. – В статье рассматриваются внешнеполитические доктрины РФ 1993, 2000 и 2008 гг. и проводится их сравнительный анализ. Выявляются преемственность, эволюция, сходства и различия между тремя документами. Российская внешнеполитическая доктрина, не имея возможности для надлежащей теоретической подготовки, прошла период апробации на практике. При этом она эволюционировала в соответствии с окружающими реалиями.

GRIGOR GRIGORYAN – *The Foreign Policy Priorities of the Russian Federation: Developments and Changes (comparative analysis of the foreign policy doctrines of the Russian Federation 1993, 2000 and 2008)*. – The article deals with foreign policy doctrines of the Russian Federation 1993, 2000 and 2008 and a comparative analysis is being carried out between them. It highlights and raises all the continuity, evolution, and the differences and similarities between the three instruments. Russian foreign policy doctrine has passed a turbulent and practical probation without an opportunity of appropriate theoretical preparation. But the concept was settled down and went through the appropriate changes and evolution in accordance with the surrounding reality. Today we are dealing with a fairly active organic and realistic concept that is not separated from reality and represents quite a bold and initiative country.